ՄԶՄԿ
iCHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ, ՀԵՂԱՇՐՋՈՒՄ, ԹԵ՞ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔ

19 Սայաթ Նովա, Երևան
Հեռ.՝ +3741 58-26-38, Ֆաքս՝ +3741 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Plus ça change, plus c'est la même chose[1]

(Համապատասխան քաղաքական կամքի առկայության պայմաններում) Հայաստանի Ընտրական օրենսգիրքը հնարավորություն տալիս է անցկացնել ընտրություններ, որոնց արդյունքները հնարավորին չափ ճիշտ կարտահայտեն ընտրողների նախապատվությունները և կձևավորեն վստահության ռեսուրս ունեցող իշխանություններ: Սա ամենևին էլ չի նշանակում, որ անգամ քաղաքական կամքի առկայության պայմաններում ընտրությունները կլինեն լիարժեք, քանի որ այս գործընթացի վրա իր բացասական ազդեցությունն է շարունակելու ունենալ մրցակցող գաղափարների և փափագվող առաջնորդների սղաճը, ընտրողների ցածր իրավագիտակցությունը, բարդ սոցիալական կացությամբ խարանված՝ ընտրություն կատարելու շարժառիթները, ինչպես նաև ընտրական գործընթացում ի պաշտոնե ընդգրկվող անհատների անբավարար մասնագիտական մակարդակը:

Քաղաքական կամք. ինքնաբավ փակուղի՞

Կամքը մարդկային բնության բաղկացուցիչն է. քաղաքական կամքի դրսևորումը չպետք է փնտրել ժողովրդավարության ուղեցույցերում և, առավել ևս, պետության տարատեսակ օղակների առօրյա աշխատանքի կամ այդ աշխատանքի արդյունավետության վերլուծություններում: Ընտրական օրենսգրքի վերաձևափոխումները, հանձնաժողովների աշխատանքները, վարչական մեքենայի գործունեությունը, կուսակցական քարոզները կամ կոչերը քաղաքական կամքի դրսևորումներ չեն: Քաղաքական կամքն առկա է, երբ գիտակցաբար դիմում են քաղաքական, նաև անձնական ռիսկերի: Այսօր քաղաքական ուժերի մոտ պակասում է նմանօրինակ ռիսկեր ստանձնելու ցանկությունը:

Հետևանքը. վերջին տասնամյակում Հայաստանում տեղի ունեցած բոլոր ընտրությունները անցել են համապատասխան քաղաքական կամքի բացակայության պայմաններում և միտված են եղել բոլոր հնարավոր ճանապարհներով քաղաքական և տնտեսական վերնախավի վերարտադրության ապահովմանը: Այս պայմաններում ընտրական գործընթացի հետագա բարելավումը, ի թիվս այլ ոլորտների, ենթադրում է Ընտրական օրենսգրքի այնպիսի փոփոխություններ, որոնք նվազագույնի կհասցնեն քաղաքական կամքի բացակայության ազդեցությունը: Այստեղ ընտրական օրենսդրության բարեփոխումների շղթան փակվում է, քանի որ ներկայիս օրենսդիր մարմնում մեծամասնությունը հետաքրքրված չի լինի իր հետագա վերարտադրությունը վտանգելով:

Անիրական լիարժեք ընտրություններ

Օրենսդրական հարթության մեջ էական վերաձևակերպումների փակուղին գրեթե անիրական է դարձնում խաղաղ ճանապարհով իշխանափոխությունը Հայաստանում, քանի դեռ իշխանությանը հավակնող որևէ մրցակից ուժ չի ստեղծի ներկայիս քաղաքական և տնտեսական վերնախավի ունեցվածքային, իսկ որոշ դեպքերում՝ ֆիզիկական անվտանգության երաշխիքներ:

Հնարավոր հետևանքը՝ Հայաստանի հետագա միջազգային մեկուսացումը /բելառուսիզացիա/ կամ գիտակցում, որ նույն մեթոդներով սեփական վերարտադրությունը կարող է կիզակետի հասցնել

[1] plus ça change, plus c'est la même chose (ֆրանս.)- որքան փոխվում, այնքան նույնն են մնում իրողությունները

ժողովրդական դժգոհությունը /Վրաստան, Ուկրաինա, Ղրղզստան/: Հեղաշրջումների ֆոնի վրա սրա գիտակցումը ենթադրում է երկու այլընտրանք. կամ թուլացնել «ակցանները» կամ՝ ավելի սեղմել: Երկրորդ այլընտրանքն իրենից ներկայացնում է ցանկացած ճնշումների բնական արձագանք, ինքնապաշտպանական բնազդ, որը կարող է սխալ լինել, և տանել իշխող ուժերի կործանման: Այդ կործանումը հղի է Հայաստանի անվտանգության խաթարմամբ և կործանարար կարող է լինել նաև Հայաստանի համար: Հայաստանը շատ ցնցումների միջով է անցել, իսկ սեղմել ակցանները կնշանակի լինել հետագա ցնցումների երաշխավորը, հրահրել դժգոհությունների նոր ալիք:

Դու՛րս՝ արատավոր շրջանակից

Ցավոք, փոփոխություն պահանջող այսօրվա ուժերը օղակի թուլացման ցանկացած հնարավորություն միանգամից փորձում են օգտագործել հօգուտ՝ խորացնելով ինքնապաշտպանական հակազդեցությունը: Հիմնական խնդիրն այն չէ, թե որ ուժերն են իշխում, այլ այն, որ Հայաստանում դեռևս չի արմատավորվել քաղաքական ուժերի հանգիստ ու բնականոն փոփոխություն: Խնդիրն իշխանափոխության մեխանիզմների, այդ թվում ընտրությունների մեջ է, և ոչ թե քաղաքական ուժերի էության ու բովանդակության: «Օղակը» սեղմելու արատավոր շրջանը խզելու եզակի հնարավորություն է ընձեռված: Կարևորը խիզախությունն է (քաղաքական կամք) և դեպքերի հաջորդականության ճիշտ ընտրությունը: Կեղծիք կլինի ասելը, որ հնարավոր է քաղաքական կամք դրսևորելով անմիջապես փոխել ձևավորված իրավիճակը: Արատավոր շրջանը շատ է խորացրել դեպքերի զարգացումը: Իսկ իրավիճակի մեղմման աստիճանական գործողությունների դաշտը լայն է.

- բազմակարծության ապահովում,
- խոսքի ազատություն,
- էլեկտրոնային լրատվամիջոցների գործունեության ազատականացում,
- քաղաքական դաշտի ապամենաշնորհացում,
- ընտրակեղծիքների դատաքննությունների ու համապատասխան պատժամիջոցների հետևողական իրականացում,
- քաղաքական որոշումների կայացման բաց դաշտի և երկխոսության սզկբունքների կայացում,
- և այլն:

Ցնցումներ կլինեն, սակայն դրանք ամուր հող կնախապատրաստեն, որպեսզի հաջորդ ընտրություններ լիարժեք դառնան:

Համառոտագիրը մշակվել է 2005թ. ապրիլի 13-ին «Լիարժեք ընտրություններ և ընտրական գործընթացների կառավարում» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ և միջազգային կառույցների ներկայացուցիչներ: